Տրանսպորտային քաղաքականություն

1.1 Ավտոճանապարհներով բեռների և ուղևորների փոխադրումներ

Ներածություն

Ավտոճանապարհային փոխադրումները կարգավորող ՀՀ օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում է ԵՄ օրենսդրության պահանջներին:

ՀՀ-ում առկա է մեկ միասնական օրենք՝ «Տրանսպորտի մասին»[1], որը կարգավորում է տրանսպորտային բնագավառի գործունեությունը՝ ավտոճանապարհային և երկաթուղային բնագավառների համար: ԵՄ տրանսպորտային բնագավառը կարգավորող օրենսդրությունը ներառում է առանձին ակտեր (դիրեկտիվներ) յուրաքանչյուր վերոհիշյալ բնագավառների համար:

ՀՀ տրանսպորտի բնագավառի օրենսդրությունը չի ներառում իրավական ակտ՝ օտարերկրյա փոխադրողների գործունեությունը տեղական ավտոճանապարհային փոխադրումների շուկայում կարգավորելու համար[2]:

ՀՀ ավտոճանապարհային փոխադրումների շուկայի համար սահմանված չեն ավտոբուսով ուղևորների միջազգային փոխադրումների ընդհանուր կանոնները: Սահմանված չէ նաև ավտոճանապարհային փոխադրումների ազգային անվտանգության չափանիշների համակարգը[3]:

ՀՀ օրենսդրության անհամապատասխանությունը ավտոճանապարհներով վտանգավոր բեռների փոխադրման կարգը սահմանող ԵՄ 1994թ. նոյեմբերի 21-ի Խորհրդի թիվ 94/55/EC կանոնակարգին[4] հիմնականում վերաբերում է Հայաստանում ավտոճանապարհային տրանսպորտի ազգային անվտանգության չափանիշների համակարգի բացակայությանը: Միջուկային և ռադիոակտիվ նյութերի փոխադրման կարգը համապատասխանում է ԵՄ օրենսդրությանը: Այն սահմանված է 2001թ. դեկտեմբերի 24-ի ՀՀ կառավարության թիվ 1263 որոշմամբ՝ միջուկային և ռադիոակտիվ նյութերի փոխադրման հատուկ կանոնները հաստատելու մասին[5], ինչը մշակել է ՀՀ բնապահպանության նախարարության «պետատոմհսկողության» տեսչությունը: ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ նաև ավտոտրանսպորտով փոխադրվող վտանգավոր բեռների ստուգման կարգը: Նպատակահարմար է սահմանել վտանգավոր բեռների փոխադրման կանոնակարգ ավտոճանապարհային փոխադրումների բնագավառի համար:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Ավտոճանապարհային փոխադրումներ» ենթագլուխը ԵՄ չափանիշներին մինչև 2009 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2006 թվական

ՀՀ օրենսդրության համապատասխանեցման համար հիմք են 2004թ. ապրիլի 29-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2004/54/EC[6] կանոնակարգը և ԵՄ 1991թ. հուլիսի 29-ի Խորհրդի թիվ 91/439/EEC[7] դիրեկտիվը:

ՀՀ վարորդական իրավունքների տրամադրման կարգը ԵՄ 1991թ. հուլիսի 29-ի Խորհրդի թիվ 91/439/EEC դիրեկտիվին համապատասխանեցնելու համար կմշակվի «Որակավորման քննություն հանձնելու և ազգային ու միջազգային վարորդական վկայական տալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

ՀՀ տարածքում ավտոմոբիլային թունելների անվտանգության պահանջները ԵՄ 2004թ. ապրիլի 29-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2004/54/EC կանոնակարգին համապատասխանեցնելու համար կմշակվի ավտոմոբիլային թունելների համար անհրաժեշտ անվտանգության պահանջները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

---

[1] «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-201, 03.02.1998թ:

[2] 1993թ. հոկտեմբերի 25-ի՝ Եվրախորհրդի կանոնակարգ թիվ 3118/93՝ ոչ ռեզիդենտ փոխադրողների համար պայմաններ, համաձայն որի՝ նրանք կարող են իրականացնել ազգային ավտոփոխադրումների ծառայություններ անդամ երկրների շրջանակներում:

[3] 1997թ. դեկտեմբերի 11-ի՝ Խորհրդի դիրեկտիվ թիվ 12/98՝ ոչ ռեզիդենտ փոխադրողների համար պայմաններ, համաձայն որի՝ նրանք կարող են իրականացնել ազգային ավտոմոբիլային ուղևորափոխադրումների ծառայություններ անդամ երկրների շրջանակներում:

[4] 1994թ. նոյեմբերի 21-ի՝ Խորհրդի կանոնակարգ թիվ 94/55/EC՝ ավտոտրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման վերաբերյալ անդամ պետությունների օրենքների մոտարկման մասին:

[5] «Միջուկային և ռադիոակտիվ նյութերի փոխադրման հատուկ կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1263-Ն որոշում, 24.12.2001թ.:

[6] 2004թ. ապրիլի 29-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի կանոնակարգ թիվ 2004/54/EC՝ միջեվրոպական ավտոմոբիլային ցանցում թունելների համար նվազագույն անհրաժեշտ անվտանգության պահանջների մասին:

[7] 1991թ հուլիսի 29-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 91/439/EEC՝ վարորդական իրավունքի վերաբերյալ:

2007 թվական

ՀՀ օրենսդրության համապատասխանեցման համար հիմք են ԵՄ 1992թ. մարտի 16-ի Խորհրդի (EEC) թիվ 684/92[8], 1998թ. հոկտեմբերի 2-ի Հանձնաժողովի թիվ N2121/98[9]1993թ. նոյեմբերի 30-ի Խորհրդի թիվ 93/704/EC որոշումը[10], 1994թ. նոյեմբերի 21-ի Խորհրդի թիվ 94/55/EC[11], 1985 թ. դեկտեմբերի 20-ի Խորհրդի (EEC) թիվ 3821/85[12] դիրեկտիվները , 1999թ. ապրիլի 29-ի Խորհրդի թիվ 1999/36/EC[13], 1996 թ. հուլիսի 25-ի Խորհրդի թիվ 96/53/EC[14] կանոնակարգերը :

ՀՀ ավտոբուսով միջազգային ուղևորափոխադրումները կարգավորող օրենսդրությունը կհամապատասխանեցվի ԵՄ 1992թ. մարտի 16-ի Խորհրդի թիվ 684/92և ԵՄ 1998թ. հոկտեմբերի 2-ի Հանձնաժողովի թիվ N2121/98 կանոնակարգերին: Մասնավորապես, կմշակվի ավտոբուսով ուղևորների միջազգային փոխադրումների կանոնները և անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ ավտոմոբիլային տրանսպորտի համար նախատեսված չափիչ (գրանցող) սարքավորումների վերաբերյալ իրավական ակտ: Անհամապատասխանությունը շտկելու համար կմշակվի ավտոմոբիլային տրանսպորտի համար նախատեսված չափիչ (գրանցող) սարքավորումների պահպանման, փոխադրման, տեղադրման և օգտագործման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ համապատասխան ԵՄ 1985թ. դեկտեմբերի 20-ի Խորհրդի թիվ 3821/85 դիրեկտիվին:

Փոխադրելի ճնշման սարքավորումները ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրելու կանոններ սահմանված չեն ՀՀ օրենսդրությամբ: Անհամապատասխանությունը շտկելու նպատակով կմշակվի ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրելի ճնշման սարքավորումների փոխադրման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ, համապատասխան ԵՄ 1999թ. ապրիլի 29-ի Խորհրդի թիվ 1999/36/EC կանոնակարգին:

ՀՀ տարածքում միջազգային փոխադրումների համար օգտագործվող որոշ տիպի ավտոմեքենաների համար սահմանված չեն չափերի և քաշերի սահմանափակման պայմանները: Սահմանափակման պայմանները սահմանելու համար կմշակվի ՀՀ տարածքում և միջազգային փոխադրումների համար օգտագործվող որոշ տիպի ավտոմեքենաների համար առավելագույն թույլատրելի չափերը և քաշերը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ, համապատասխան ԵՄ 1996 թ. հուլիսի 25-ի Խորհրդի թիվ 96/53/EC կանոնակարգին:

Ինստիտուցիոնալ կարողությունները հզորացնելու նպատակով կկազմակերպվեն դասընթացներ՝ «Միջազգային ճանապարհային փոխադրումների ընդհանուր եվրոպական կանոնները» թեմայով:

Ավտոճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և վթարային իրավիճակների կանխարգելման միջոցառումների նպատակով կմշակվի ավտոճանապարհային իրադարձությունների (վթարների, պատահարների, միջադեպերի և այլ դեպքերի) տվյալների հավաքման և շտեմարանի ստեղծման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ, համապատասխան ԵՄ 1993թ. նոյեմբերի 30-ի Խորհրդի թիվ 93/704/EC որոշմանը:

Կարևորելով ՀՀ տարածքում վտանգավոր բեռների փոխադրումների օրենսդրական կարգավորումը և դրա հետ կապված բնակչության անվտանգությունը՝ այդ բնագավառը կարգավորող օրենսդրությունը կհամապատասխանեցվի ԵՄ 1994 թ. նոյեմբերի 21-ի Խորհրդի թիվ 94/55/EC[15] կանոնակարգին:

ՀՀ օրենսդրական անհամապատասխանությունը շտկելու նպատակով կմշակվի վտանգավոր բեռների փոխադրման մասին օրենքի նախագիծ: Ավտոճանապարհներով վտանգավոր բեռների փոխադրումը կանոնակարգելու համար կմշակվի նաև ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր

---

[8] 1992թ. մարտի 16-ի Խորհրդի կանոնակարգ (EEC) թիվ 684/92՝ ավտոբուսով ուղևորների միջազգային փոխադրումների ընդհանուր կանոնների մասին:

[9] 1998թ. հոկտեմբերի 2-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ N2121/98, Խորհրդի կանոնակարգերի (EEC) թիվ 684/92 և (EC) թիվ 12/98 կիրառումը՝ ավտոբուսով ուղևորների փոխադրման փաստաթղթերին մասին:

[10] 1993թ. նոյեմբերի 30-ի Խորհրդի որոշում թիվ 93/704/EC՝ Համայնքի ճանապարհային պատահարների տվյալների բազայի ստեղծման մասին:

[11] 1994 թ. նոյեմբերի 21-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 94/55/EC՝ ավտրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման վերաբերյալ անդամ պետությունների օրենքների մոտարկման մասին:

[12] 1985 թ. դեկտեմբերի 20-ի՝ Խորհրդի դիրեկտիվ (EEC) թիվ 3821/85՝ ավտոտրանսպորտի չափիչ (գրանցող) սարքավորումների մասին:

[13] 1999թ. ապրիլի 29-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1999/36/EC՝ փոխադրելի ճնշման սարքավորումների մասին:

[14] 1996 թ. հուլիսի 25-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 96/53/EC՝ Համայնքի շրջանակներում օգտագործվող որոշ տիպի ավտոմեքենաների համար ազգային և միջազգային փոխադրումների համար առավելագույն թույլատրելի չափերը և միջազգային փոխադրումների համար առավելագույն թույլատրելի քաշերը հաստատելու մասին:

[15] 1994 թ. նոյեմբերի 21-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 94/55/EC՝ ավտոտրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման վերաբերյալ անդամ պետությունների օրենքների մոտարկման մասին:

բեռների փոխադրման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ, համապատասխան ԵՄ 1994թ. նոյեմբերի 21-ի Խորհրդի թիվ 94/55/EC[16] կանոնակարգին:

2007 թվականի ընթացքում նախատեսվում է ստեղծել ՀՀ կառավարությանն առընթեր տրանսպորտային իրադարձությունների փորձաքննության կենտրոն: Կենտրոնի հիմնական նպատակն է հանրությանը տրամադրել մասնագիտական եզրակացություն՝ տրանսպորտային բնագավառում տեղի ունեցած իրադարձությունների (վթարների, միջադեպերի, պատահարների և այլ նմանատիպ դեպքերի) մասին: Կենտրոնը կգործի վտանգավոր բեռների փոխադրման մասին ՀՀ օրենքին համապատասխան, ինչը նախատեսվում է ընդունել 2007 թվականի ընթացքում:

Կկազմակերպվեն նաև դասընթացներ՝ «Միջազգային ուղևորափոխադրումների ընդհանուր Եվրոպական կանոնները» թեմայով:

2008 թվական

ՀՀ օրենսդրության համապատասխանեցման համար հիմք են ԵՄ 1995թ. հոկտեմբերի 6-ի Խորհրդի թիվ 95/50/EC[17] կանոնակարգը, 1993թ. հոկտեմբերի 25-ի Եվրախորհրդի թիվ 3118/93[18], 2003թ. հուլիսի 15-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2003/59/EC[19], , , 1996թ. հունիսի 3-ի Խորհրդի թիվ 96/35/EEC[20], 2002թ. մարտի 11-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2002/15/EC[21] կանոնակարգերը և 1992 թ. մարտի 26-ի Խորհրդի (EEC) թիվ 881/92[22], 1997թ. դեկտեմբերի 11-ի Խորհրդի թիվ 12/98[23] և 1996թ. ապրիլի 29-ի Խորհրդի թիվ 96/26/EC[24] դիրեկտիվները:

Ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվող վտանգավոր բեռների ստուգման կարգը սահմանելու համար կմշակվի ՀՀ տարածքում ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվող վտանգավոր բեռների ստուգման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ համապատասխան ԵՄ 1995թ. հոկտեմբերի 6-ի Խորհրդի թիվ 95/50/EC կանոնակարգին:

Ավտոճանապարհներով վտանգավոր բեռների փոխադրման անվտանգության ապահովման և վերահսկման համար կմշակվի ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման անվտանգության խորհրդատուների որակավորման և նշանակման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ համապատասխան 1996թ. հունիսի 3-ի Խորհրդի թիվ 96/35/EEC կանոնակարգին:

Ավտոճանապարհային փոխադրումների շուկայի ազատականացման և մրցակցության ապահովման նպատակով, համապատասխան ԵՄ 1992 թ. մարտի 26-ի Խորհրդի թիվ 881/92 և 1997թ. դեկտեմբերի 11-ի Խորհրդի թիվ 12/98 դիրեկտիվներին, կմշակվի ՀՀ կառավարության երկու որոշման նախագիծ՝ ՀՀ տարանցիկ ավտոբեռնափոխադրումների շուկա մուտք գործելու կարգը և պայմանները հաստատելու մասին և ՀՀ տարածքում օտար պետություններում գրանցված փոխադրողների համար ավտոմոբիլային ուղևորափոխադրումներ իրականացնելու կանոնակարգը հաստատելու մասին:

ՀՀ տարածքում ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնող անձանց աշխատանքային ժամերը կարգավորելու նպատակով կմշակվի ՀՀ տարածքում ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնող անձանց աշխատանքային ժամի

---

[16] 1994 թ. նոյեմբերի 21-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 94/55/EC՝ ավտոտրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման վերաբերյալ անդամ պետությունների օրենքների մոտարկման մասին:

[17] 1995թ. հոկտեմբերի 6-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 95/50/EC՝ ավտոտրանսպորտով փոխադրվող վտանգավոր բեռների ստուգման միասնական ընթացակարգերի մասին:

[18] 1993թ. հոկտեմբերի 25-ի Եվրախորհրդի կանոնակարգ թիվ 3118/93՝ ոչ ռեզիդենտ փոխադրողների համար պայմաններ, համաձայն որի՝ նրանք կարող են իրականացնել ազգային ավտոփոխադրումների ծառայություններ անդամ երկրների շրջանակներում:

[19] 2003թ. հուլիսի 15-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի կանոնակարգ թիվ 2003/59/EC՝ բեռներ կամ ուղևորներ փոխադրող որոշ տիպի ավտոմեքենաների վարորդների սկզբնական որակավորման և պարբերական ուսուցման վերաբերյալ՝ ի լրումն Խորհրդի (EEC) դիրեկտիվին՝ թիվ 3820/85, և Խորհրդի կանոնակարգին՝ թիվ 91/439/EEC, և ուժը կորցրած թիվ 76/914/EEC Խորհրդի կանոնակարգի փոխարեն:

[20] 1996թ. հունիսի 3-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 96/35/EEC՝ ավտոտրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման անվտանգության խորհրդատուների նշանակման և որակավորման մասին:

[21] 2002թ. մարտի 11-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի կանոնակարգ թիվ 2002/15/EC՝ ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնող անձանց աշխատանքային ժամի կազմակերպման մասին:

[22] 1992 թ. մարտի 26-ի Խորհրդի (EEC) դիրեկտիվ թիվ 881/92՝ համայնքի շրջանակներում դեպի անդամ երկրի տարածք կամ անդամ երկրի տարածքից մեկ կամ ավելի անդամ երկրների տարածքով տարանցիկ ավտոբեռնափոխադրումների շուկա մուտք գործելու մասին:

[23] 1997թ. դեկտեմբերի 11-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 12/98՝ ոչ ռեզիդենտ փոխադրողների համար պայմաններ, համաձայն որի՝ նրանք կարող են իրականացնել ազգային ավտոմոբիլային ուղևորափոխադրումների ծառայություններ անդամ երկրների շրջանակներում:

[24] 1996թ. ապրիլի 29-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 96/26/EC՝ ուղևորների և ուղեբեռի ավտոփոխադրումների օպերատորի գործունեության ճանաչում և դիպլոմների, վկայագրերի և որակավորումը հաստատող այլ փաստաթղթերի փոխադարձ ճանաչում, որպեսզի աջակցվի օպերատորների իրավունքին՝ ազատ մասնակցելու ազգային և միջազգային տրանսպորտային գործունեությանը:

կազմակերպման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ համապատասխան ԵՄ 2002թ. մարտի 11-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2002/15/EC կանոնակարգին:

ՀՀ ավտոճանապարհային փոխադրումների բնագավառի ինստիտուցիոնալ կարողությունները հզորացնելու համար ՀՀ կապի և տրանսպորտի նախարարության կազմում կստեղծվի տրանսպորտային բնագավառի մասնագետների վերապատրաստման և մասնագիտական որակավորման կենտրոն: Կենտրոնի հիմնական նպատակն է ապահովել ՀՀ տարածքում ավտոմոբիլային փոխադրումների օպերատորների գործունեության ճանաչումը, ինչպես նաև տրանսպորտային բնագավառի մասնագետների դիպլոմների, վկայականների և որակավորումը հաստատող այլ փաստաթղթերի ճանաչումը:

Ավտոփոխադրումների օպերատորների գործունեության ճանաչման, ինչպես նաև տրանսպորտային բնագավառի մասնագետների դիպլոմների, վկայականների և որակավորումը հաստատող այլ փաստաթղթերի ճանաչման կարգը սահմանելու նպատակով կմշակվի ՀՀ տարածքում ուղևորների և ուղեբեռի ավտոփոխադրումների օպերատորի գործունեության ճանաչում, ինչպես նաև դիպլոմների, վկայագրերի և որակավորումը հաստատող այլ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման կարգը հաստատելու մասին կառավարության որոշման նախագիծ՝ համապատասխան 1996թ. ապրիլի 29-ի Խորհրդի թիվ 96/26/EC դիրեկտիվին:

Ավտոճանապարհային փոխադրումների շուկան ազատականացնելու և մրցակցություն ապահովելու նպատակով կմշակվի ՀՀ տարածքում օտար պետություններում գրանցված փոխադրողների համար բեռնափոխադրումներ իրականացնելու կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ համապատասխան ԵՄ 1993թ հոկտեմբերի 25-ի Եվրախորհրդի թիվ 3118/93 կանոնակարգի:

Ավտոմոբիլային փոխադրումների բնագավառում անվտանգության և որակյալ ծառայությունների ապահովման նպատակով կմշակվի ՀՀ տարածքում ուղևորներ կամ բեռներ փոխադրողների որոշ տիպի ավտոմեքենաների վարորդների համար սկզբնական որակավորման կարգը և պարբերական ուսուցման պայմանները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ համապատասխան 2003թ. հուլիսի 15-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2003/59/EC կանոնակարգին:

2009 թվական

ՀՀ օրենսդրության համապատասխանեցման համար հիմք է ԵՄ 1985թ. դեկտեմբերի 20-ի ճանապարհային տրանսպորտի բնագավառին վերաբերող որոշ սոցիալական օրենսդրության ներդաշնակեցման մասին Խորհրդի թիվ 3820/85[25] կանոնակարգը:

Ավտոմոբիլային փոխադրումների բնագավառում զբաղված աշխատողների սոցիալական ապահովությունը ԵՄ օրենսդրությանը ներդաշնակեցնելու նպատակով կմշակվի ավտոճանապարհային տրանսպորտի բնագավառի աշխատողների սոցիալական ապահովության մասին ՀՀ օրենքի նախագիծ՝ համապատասխան Խորհրդի թիվ 3820/85կանոնակարգին:

Ինստիտուցիոնալ կարողությունները հզորացնելու նպատակով կկազմակերպվի դասընթաց «Ճանապարհային փոխադրումների բնագավառի աշխատողների սոցիալական ապահովումը» թեմայով:

[25] 1985թ. դեկտեմբերի 20-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 3820/85՝ ճանապարհային տրանսպորտի բնագավառին վերաբերող սոցիալական օրենսդրության որոշ ներդաշնակեցման մասին:

1.1.1.Օրենսդրական համապատասխանեցում

NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
	1	2	3	4	5	6
			2006			
1.	Որակավորման քննություն հանձնելու և ազգային ու միջազգային վարորդական վկայական տալու կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1991թ հուլիսի 29-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 91/439/EEC վարորդական իրավունքի վերաբերյալ	ՀՀ ԿԱ ոստիկանություն	4-րդ եռամսյակ	36	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն
2.	Ավտոմոբիլային թունելների համար անհրաժեշտ անվտանգության պահանջները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2004թ. ապրիլի 29-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի կանոնակարգ թիվ 2004/54/EC միջեվրոպական ավտոմոբիլային ցանցում թունելների համար նվազագույն անհրաժեշտ անվտանգության պահանջների մասին	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության, ՀՀ քաղաքաշինության նախարարության մասնակցությամբ)	4-րդ եռամսյակ	60	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն
	2006, ԸՆԴԱՄԵՆԸ				96	
			2007			
3.	Ավտոբուսով ուղևորների միջազգային փոխադրումների կանոնները և անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1992թ. մարտի 16-ի Խորհրդի կանոնակարգ (EEC) թիվ 684/92 ավտոբուսով ուղևորների միջազգային փոխադրումների ընդհանուր կանոնների մասին 1998թ. հոկտեմբերի 2-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ N2121/98, Խորհրդի կանոնակարգերի (EEC) թիվ 684/92 և (EC) թիվ 12/98 կիռարումը ավտոբուսով ուղևորների փոխադրման փաստաթղթերին մասին:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի մասնակցությամբ)	2-րդ եռամսյակ	72	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն
4.	Ավտոճանապարհային իրադարձությունների (վթարների,	1993թ. նոյեմբերի 30-ի Խորհրդի որոշում թիվ 93/704/EC	ՀՀ ԿԱ ոստիկանություն (ՀՀ տրանսպորտի և	3-րդ եռամսյակ	15	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն

NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
	պատահարների, միջադեպերի և այլ դեպքերի) տվյալների հավաքագրման և բազայի ստեղծման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում հիմնվելով ՀՀ կառավարության թիվ 1297-ն որոշման վրա	Համայնքի ճանապարհային պատահարների տվյալների բազայի ստեղծման մասին	կապի նախարարության մասնակցությամբ)			
5.	• Վտանգավոր բեռների փոխադրման մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում • Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որաշման նախագծի մշակում	1994 թ. նոյեմբերի 21-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 94/55/EC ավտրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման վերաբերյալ անդամ պետությունների օրենքների մոտարկման մասին	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ ԿԱ ոստիկանություն, ՀՀ բնապահպանության նախարարության մասնակցությամբ)	3-րդ եռամսյակ	54	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն
6..	Ավտոմոբիլային տրանսպորտի համար նախատեսված չափիչ /գրանցող/ սարքավորումների պահպանման, փոխադրման, տեղադրման և օգտագործման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1985 թ. դեկտեմբերի 20-ի Խորհրդի դիրեկտիվ (EEC) թիվ 3821/85 ավտոտրանսպորտի չափիչ/գրանցող/ սարքավորումների մասին	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և ՀՀ ԿԱ ոստիկանության մասնակցությամբ)	4-րդ եռամսյակ	72	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն
7.	Ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրելի ճնշման սարքավորումների փոխադրման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման (տեխնիկական կանոնակարգի) նախագծի մշակում	1999թ. ապրիլի 29-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1999/36/EC փոխադրելի ճնշման սարքավորումների մասին	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության, ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ ԿԱ ոստիկանության մասնակցությամբ)	4-րդ եռամսյակ	96	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն
8.	ՀՀ տարածքում և միջազգային փոխադրումների համար օգտագործվող որոշ տիպի ավտոմեքենաների համար առավելագույն թույլատրելի չափերը և քաշերը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1996 թ. հուլիսի 25-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 96/53/EC Համայնքի շրջանակներում օգտագործվող որոշ տիպի ավտոմեքենաների համար ազգային և միջազգային փոխադրումների համար	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության, ՀՀ ԿԱ ոստիկանության, ՀՀ ԿԱ մաքսային	4-րդ եռամսյակ	27	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն

NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
		մակսիմալ թույլատրելի չափերը և միջազգային փոխադրումների համար մաքսիմալ թույլատրելի քաշերը հաստատելու մասին	պետական կոմիտեի մասնակցությամբ)			
2007, ԸՆԴԱՄԵՆԸ					336	
2008						
9.	ՀՀ տարածքում ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվող վտանգավոր բեռների ստուգման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որաշման նախագծի մշակում	1995թ. հոկտեմբերի 6-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 95/50/EC ավտոտրանսպորտով փոխադրվող վտանգավոր բեռների ստուգման միասնական ընթացակարգերի մասին	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ ոստիկանության մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	54	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն
10.	ՀՀ տարանցիկ ավտոբեռնափոխադրումների շուկա մուտք գործելու կարգը և պայմանները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1992 թ. մարտի 26-ի Խորհրդի (EEC) դիրեկտիվ թիվ 881/92 համայնքի շրջանակներում դեպի անդամ երկրի տարածք կամ անդամ երկրի տարածքից մեկ կամ ավելի անդամ երկրների տարածքով տարանցիկ ավտոբեռնափոխադրումների շուկա մուտք գործելու մասին	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ ԿԱ ոստիկանություն, ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	27	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն
11.	ՀՀ տարածքում օտար պետություններում գրանցված փոխադրողների համար ավտոմոբիլային ուղևորափոխադրումներ իրականացնելու կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1997թ. դեկտեմբերի 11-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 12/98 ոչ ռեզիդենտ փոխադրողների համար պայմաններ, համաձայն որի նրանք կարող են իրականացնել ազգային ավտոմոբիլային ուղևորափոխադրումների ծառայություններ անդամ երկրների շրջանակներում	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և ՀՀ ԿԱ ոստիկանության մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	48	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն
12.	Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման անվտանգության խորհրդատուների որակավորման և նշանակման կարգը	1996թ. հունիսի 3-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 96/35/EEC ավտորտանսպորտով վտանգավոր բեռների	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ բնապահպանության նախարարության	2-րդ եռամսյակ	15	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն

NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
	հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	փոխադրման անվտանգության խորհրդատուների նշանակման և որակավորման մասին	մասնակցությամբ)			
13.	ՀՀ տարածքում ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնող անձանց աշխատանքային ժամի կազմակերպման մասին ՀՀ կառավարության նախագծի մշակում	2002թ. մարտի 11-ի Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի կանոնակարգ թիվ 2002/15/EC ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնող անձանց աշխատանքային ժամի կազմակերպման մասին	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության մասնակցությամբ)	2-րդ եռամսյակ	30	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն
14.	ՀՀ տարածքում ուղևորների և ուղեբեռի ավտոփոխադրումների օպերատորի գործունեության ճանաչում ինչպես նաև դիպլոմների, վկայագրերի և այլ որակավորումը հաստատող փաստաթղթերի փոխադարձ ճանաչման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1996թ ապրիլի 29-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 96/26/EC ուղևորների և ուղեբեռի ավտոփոխադրումների օպերատորի գործնեության ճանաչում և դիպլոմների, վկայագրերի և այլ որակավորումը հաստատող փաստաթղթերի փոխադարձ ճանաչում որպիսի աջակցել օպերատորների իրավունքին ազատ մասնակցելու ազգային և միջազգային տրանսպորտային գործնեությանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ կրթության և գիտության նախարարության ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության, ՀՀ ԿԱ ոստիկանության մասնակցությամբ)	2-րդ եռամսյակ	27	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն
15.	ՀՀ տարածքում օտար պետություններում գրանցված փոխադրողների համար բեռնափոխադրումներ իրականացնելու կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1993թ հոկտեմբերի 25-ի Եվրախորհրդի կանոնակարգ թիվ 3118/93, ոչ ռեզիդենտ փոխադրողների համար պայմաններ, համաձայն որի նրանք կարող են իրականացնել ազգային ավտոփոխադրումների ծառայություններ անդամ երկրների շրջանակներում	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության, ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի մասնակցությամբ, ՀՀ ԿԱ ոստիկանություն)	3-րդ եռամսյակ	48	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն
16.	ՀՀ տարածքում ուղևորներ կամ բեռներ փոխադրողների որոշ տիպի	2003թ. հուլիսի 15-ի Եվրոպական խորհրդարանի և	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	4-րդ եռամսյակ	36	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն

NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
	ավտոմոբենաների վարորդների սկզբնական որակավորման կարգը և պարբերաբար ուսուցման պայմանները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Խորհրդի կանոնակարգ թիվ 2003/59/EC բեռներ կամ ուղևորներ փոխադրող որոշ տիպի ավտոմեքենաների վարորդների սկզբնական որակավորման և պարբերական ուսուցման վերաբերյալ իլրումն Խորհրդի (EEC) դիրեկտիվին թիվ 3820/85 և Խորհրդի կանոնակարգին թիվ 91/439/EEC և ուժը կորցրած թիվ 76/914/EEC Խոհրդի կանոնակարգի փոխարեն	(ՀՀ ԿԱ ոստիկանության մասնակցությամբ)			
2008, ԸՆԴԱՄԵՆԸ					285	
2009						
	Ավտոճանապարհային տրանսպորտի բնագավառի աշխատողների սոցիալական ապահովության մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում	Ճանապարհային տրանսպորտի բնագավառին վերաբերող որոշ սոցիալական օրենսդրության ներդաշնակեցման մասին Խորհրդի թիվ 3820/85 կանոնակարգ, առ 20 դեկտեմբերի 1985թ.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	60	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն
2009, ԸՆԴԱՄԵՆԸ					60	
2006-2009, ԸՆԴԱՄԵՆԸ					777	

1.1.2.Ինստիտուցիոնալ կարողություններ

NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
	1	2	3	4
1.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե ՀՀ ԿԱ ոստիկանություն	-	Միջազգային ճանապարհային փոխադրումների ընդհանուր Եվրոպական կանոնների վերաբերյալ սեմինար դասընթաց (3 օր/ 2007թ) Միջազգային ուղևորափոխադրումների ընդհանուր Եվրոպական կանոնների վերաբերյալ սեմինար դասընթաց (3 օր/ 2007թ)	
2.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե ՀՀ ԿԱ ոստիկանություն	-	Ավտոտրանսպորտային բնագավառում անվտանգության գնահատման Եվրոպական չափանիշների համակարգի վերաբերյալ սեմինար դասընթաց (5 օր / 2007թ.)	Ավտոտրանսպորտային փոխադրումների անվտանգության գնահատման մասնագետ Վտանգավոր բեռների փոխադրումների կազմակերպման մասնագետ Վտանգավոր բեռների փոխադրումների անվտանգության մասնագետ Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ ԿԱ ոստիկանություն ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե	-	Վտանգավոր բեռների փոխադրման կազմակերպման և անվտանգության ապահովման վերաբերյալ դասընթացներ (10 օր/ 2008)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն, վերապատրաստում
4.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	Տրանսպորտային բնագավառի մասնագետների վերապատրաստման և մասնագիտական որակավորման կենտրոն (2003թ. հուլիսի 15-ի Եվրոպական խորհրդարանի և	Ճանապարհային փոխադրումների բնագավառի աշխատողների սոցիալական ապահովման վերաբերյալ սեմինար դասընթաց (3 օր/ 2009թ)	Ավտոտրանսպորտային փոխադրումների անվտանգության գնահատման մասնագետ

NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
		Խորհրդի կանոնակարգ թիվ 2003/59/EC բեռներ կամ ուղևորներ փոխադրող որոշ տիպի ավտոմեքենաների վարորդների սկզբնական որակավորման և պարբերական ուսուցման վերաբերյալ իլրումն Խորհրդի (EEC) դիրեկտիվին թիվ 3820/85 և Խորհրդի կանոնակարգին թիվ 91/439/EEC և ուժը կորցրած թիվ 76/914/EEC Խոհրդի կանոնակարգի փոխարեն 1996թ ապրիլի 29-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 96/26/EC ուղևորների և ուղեբեռի ավտոփոխադրումների օպերատորի գործնեության ճանաչում և դիպլոմների, վկայագրերի և այլ որակավորումը հաստատող փաստաթղթերի փոխադարձ ճանաչում որպիսի աջակցել օպերատորների իրավունքին ազատ մասնակցելու ազգային և միջազգային տրանսպորտային գործնեությանը)		Վտանգավոր բեռների փոխադրումների կազմակերպման մասնագետ Վտանգավոր բեռների փոխադրումների անվտանգության մասնագետ Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն, վերապատրասում
5.		Տրանսպորտային իրադարձությունների փորձաքննության կենտրոն, 2007թ. (1994 թ. նոյեմբերի 21-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 94/55/EC ավտրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման վերաբերյալ անդամ պետությունների օրենքների մոտարկման մասին)		

2.1 Երկաթուղային փոխադրումներ

Ներածություն

Երկաթուղային փոխադրումները կարգավորող ՀՀ օրենսդրությունը մասամբ համապատասխանում է ԵՄ օրենսդրության պահանջներին:

Հայաստանի Հանրապետությունում առկա է մեկ միասնական օրենք՝ «Տրանսպորտի մասին»[26], որը կարգավորվում է տրանսպորտային բնագավառի գործունեությունը՝ ավտաճանապարհային և երկաթուղային տրանսպորտի բնագավառների համար, մինչդեռ ԵՄ օրենսդրությունը պարունակում է առանձին ակտեր (դիրեկտիվներ) յուրաքանչյուր վերոհիշյան բնագավառների համար:

ՀՀ տրանսպորտի բնագավառի օրենսդրությունը չի ներառում համակցված խառը բեռափոխադրումները կարգավորող իրավական ակտ[27]: Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրքը և «Տրանսպորտի մասին» օրենքը սահմանում են մեկական ընդհանուր բնույթի հոդվածներ համակցված բեռնափոխադրումների մասին[28], սակայն տարբեր բնագավառների փոխադրողների հարաբերությունները, ինչպես նաև պատվիրատուի և փոխադրողի միջև միասնական պայմանագրի կնքման պայմանները, կարգը և սակագները կանոնակարգված չեն:

Երկաթուղային գործունեության լիցենզավորման մասին ՀՀ օրենսդրական նորմերի հիմնական անհամապատասխանությունը ԵՄ պահանջներին կայանում է նրանում, որ ՀՀ «Լիցենզավորման մասին» օրենքը սահմանում է լիցենզավորում միասնական երկաթուղային գործունեության կազմակերպելու համար[29], մինչդեռ ԵՄ 1995թ. հունիսի 19-ի թիվ 95/18 խորհրդի դիրեկտիվը սահմանում է երկաթուղային գործունեության տարատեսակում[30]՝ ուղևորափոխադրում, բեռնափոխադրում, քաղաքային, մերձքաղաքային և շրջանային փոխադրումներ, երթակառուցվածքի օպերատոր, երթևեկության օպերատոր և այլն: ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ նմանատիպ տարատեսակում և լիցենզավորման կարգ յուրաքանչյուրի համար (կարգը ընդհանուր է): Սահմանված չէ նաև երկաթուղային գործունեությամբ զբաղվող անձի համար ֆինանսական կայունության հավաստման կարգը, ինչը անհրաժեշտ պայման է լիցենզիա ստանալու համար, ԵՄ 1995թ. հունիսի 19-ի թիվ 95/18 խորհրդի դիրեկտիվին համաձայն[31]:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն նաև երկաթուղային ենթակառուցվածքի մուտքի պայմանները ու ենթակառուցվածքի և երկաթուղային ընկերությունների անվտանգության սերտիֆիկացման կարգը: Դրա հետ կապված ՀՀ օրենսդրությամբ չի սահմանված նաև երկաթուղային ենթակառուցվածքի շահագործման, անվտանգության և արդյունավետության ազգային չափանիշների համակարգը:

ՀՀ օրենսդրության անհամապատասխանությունը երկաթուղով վտանգավոր բեռների փոխադրման կարգը սահմանող ԵՄ 1996թ. հուլիսի 23-ի Խորհրդի թիվ 96/49 դիրեկտիվին[32] հիմնականում նույնպես կապված է ազգային չափանիշների համակարգի բացակայության հետ:

Միջուկային և ռադիոակտիվ նյութերի փոխադրման կարգը համապատասխանում է ԵՄ թիվ 96/49 դիրեկտիվին: Այն սահմանված է 2001թ դեկտեմբերի 24-ի ՀՀ կառավարության թիվ 1263 որոշմամբ՝ միջուկային և ռադիոակտիվ նյութերի փոխադրման հատուկ կանոնները հաստատելու մասին[33]: ՄԻնչևնույն ժամանակ անհրաժեշտ է սահմանել երկաթուղային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման առանձին կանոնակարգ:

ԵՄ օրենսդրության նորմեր, որոնք ներկայումս հնարավոր չի կիրառել Հայաստանի Հանրապետությունում

ԵՄ երեք դիրեկտիվների նորմեր ներկայումս չեն առնչվում Հայաստանի հետ, քանի որ վերաբերում են բացառապես ԵՄ անդամ երկրներին: Դրանք են՝

---

[26] «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-201, ընդունված 03.02.1998թ:

[27] Խորհրդի 1992թ. դեկտեմբերի 1992թ. դեկտեմբերի 7-ի 92/106 դիրեկտիվը անդամ պետությունների միջև որոշ տեսակի համակցված փոխադրման համար ընդանուր կանոններ հաստատելու մասին; OJ No. L 368, 17/12/1992:

[28] ՀՀ «Քաղաքացիական օրենսգիրք» ՀՕ-239, 05.05.1998թ հոդ. 858; «Տրանսպորտի մասին օրենք» ՀՕ-201, 03.02.1998թ. հոդ. 10:

[29] «Լիցենզավորման մասին» օրենք, ՀՕ-193, 30.05.2001թ. հոդ. 43:

[30] 1995թ. հունիսի 19-ի Խորհրդի թիվ 95/18 դիրեկտիվը երկաթուղային կազմակերպությունների լիցենզավորման մասին, հոդ. 2; OJ No. L 143, 27/06/1995, p70:

[31] 1995թ. հունիսի 19-ի Խորհրդի թիվ 95/18 դիրեկտիվը երկաթուղային կազմակերպությունների լիցենզավորման մասին, հավելված 1; OJ No. L 143, 27/06/1995, p70:

[32] 1996թ. հուլիսի 23-ի Խորհրդի թիվ 96/49 դիրեկտիվը անդամ պետությունների երկաթուղով վտանգավոր բեռների փոխադրման առնչվող օրենքների մոտարկման վերաբերյալ:

[33] Միջուկային և ռադիոակտիվ նյութերի փոխադրման հատուկ կանոնները հաստատելու մասին Կառավարության N 1263-ն որոշում, ընդունված 24.12.2001թ

- Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003թ. հուլիսի 22-ի թիվ 1382/2003 կանոնակարգը ֆրախտային տրանսպորտային համակարգի շրջակա միջավայրի պահպանման ցուցանիշները բարելավելու համար Համայնքներին ֆինանսական օժանդակություն հովանավորելու մասին /Մարկո Պոլո ծրագիր/
- Խորհրդի և Խորհրդարանի 2001թ. մարտի 19-ի թիվ 2001/16 դիրեկտիվը միջեվրոպական պայմանագրային երկաթուղային համակարգի համաօգտագործելիության մասին
- Խորհրդի 1996թ. հուլիսի 23-ի թիվ 96/48 դիրեկտիվը միջեվրոպական ճեպընթաց երկաթուղային համակարգի համաօգտագործելիության մասին

Հայաստանի Հանրապետությունը ներգրաված չէ Եվրոպական համակցված բեռնափոխադրումների համակարգում և չի կարող օգտվել Մարկո Պոլո ֆինանսական օժանդակության համակարգից: Հայաստանում գործող երկաթուղային համակարգը չի միանում Եվրոպական միության անդամ պետություններից ոչ մեկի հետ և տվյալ պահին համաօգտագործելիության նորմերի համապատասխանության խնդիրը առաջնահերթ չէ: Հայաստանում չի գործում նաև ճեպընթաց երկաթուղային համակարգ:

Բացառությամբ վերը նշված ակտերի ծրագրի շրջանակներում նախատեսվում է ամբողջապես համապատասխանեցել երկաթուղային փոխադրումների ենթագլուխը ԵՄ չափանիշներին 2007-2009թթ. ընթացքում:

2007 թվական

Կարևորելով երկաթուղային փոխադրումների շուկայում մրցակցության ապահովումը ինչպես նաև ուղևորների, փոխադրողների և ենթակառուցվածքի անվտանգությունը Հայաստանի Հանրապետության երկաթուղային փոխադրումները կարգավորող օրենսդրությունը կհամապատասխանեցվի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2001թ. փետրվարի 26-ի թիվ 2001/14[34] և 2004թ. ապրիլի 29-ի թիվ 2004/49[35] դիրեկտիվներին:

Մասնավորապես կմշակվի «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

Կմշակվեն նաև կառավարության որոշումների երկու նախագծեր՝ երկաթուղային ենթակառուցվածքի և այն օգտագործող կազմակերպությունների անվտանգության գնահատման կարգը հաստատելու մասին և երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործման ու անվտանգության սերտիֆիկացման համար վճարները գանձման կարգը հաստատելու մասին:

ՀՀ տարածքում երկաթուղային գործունեություն կազմակերպելու լիցենզավորման կարգը սահմանող օրենսդրությունը կհամապատասխանեցվի ԵՄ 1995թ հունիսի 19-ի Խորհրդի թիվ 95/18 դիրեկտիվին[36]:

Երկաթուղային գործունեությամբ զբաղվող ընկերությունների լիցենզավորումը կարգավորող օրենսդրության անհամապատասխանությունը շտկելու համար կմշակվի «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի[37] փոփոխությունների և լրացումների մասին օրենքի նախագիծ: Առաջարկվող փոփոխությունները կվերաբերվեն վերոհիշյալ օրենքի 43-րդ հոդվածին՝ լիցենզավորման ենթակա գործունեություն ցանկում սահմանել երկաթուղային գործունեության տարատեսակում համաձայն ԵՄ 1995թ. հունիսի 19-ի թիվ 95/18 խորհրդի դիրեկտիվին:

Համաձայն վերոհիշյալ օրենքի փոփոխությանը կմշակվի ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ ՀՀ տարածքում երկաթուղային գործունեություն իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման կարգը հաստատելու մասին:

2008 թվական

ՀՀ տարածքում համակցված փոխադրումները կարգավորող օրենսդրությունը կհամապատասխանեցվի ԵՄ 1992թ. դեկտեմբերի 7-ի Խորհրդի թիվ 92/106 դիրեկտիվին[38]: Մասնավորապես կմշակվի «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի[39] փոփոխությունների և լրացումների մասին օրենքի նախագիծ համակցված փոխադրումների կարգն ու պայմանները սահմանելու

---

[34] 2001թ. փետրվարի 26-ի թիվ 2001/14 Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործման ու անվտանգության սերտիֆիկացման համար վճարների գանձման մասին:

[35] 2004թ. ապրիլի 29-ի թիվ 2004/49 խորհրդի և Խորհրդարանի դիրեկտիվ միության երկաթուղու անվտանգության վերաբերյալ, որը լրացնում է երկաթուղային կազմակերպությունների լիցենզավորման մասին 95/18 դիրեկտիվը և երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործման ու անվտանգության սերտիֆիկացման համար վճարների գանձման մասին 2001/14 դիրեկտիվը:

[36] 1995թ. հունիսի 19-ի խորհրդի թիվ 95/18 դիրեկտիվ երկաթուղային կազմակերպությունների լիցենզավորման մասին; OJ No. L 143, 27/06/1995, p70

[37] «Լիցենզավորման մասին» օրենք, ՀՕ-193, 30.05.2001թ. հոդ. 43

[38] 1992թ. դեկտեմբերի 7-ի թիվ 92/106 Խորհրդի դիրեկտիվ անդամ պետությունների միջև որոշ տեսակի համակցված փոխադրումների համար ընդհանուր կանոններ հաստատելու մասին; OJ No. L 368, 17/12/1992:

[39] «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-201, ընդունված 03.02.1998թ:

նպատակով: Այդ փոփոխություններին համապատասխան կմշակվի նաև ՀՀ տարածքում համակցված փոխադրումների կանոնները հաստատելու մասին կառավարության որոշման նախագիծ:

Ինստիտուտիոնալ կարողությունները հզորացնելու նպատակով նախատեսվում է ՀՀ կապի և տրանսպորտի նախարարությանն առընթեր ստեղծել տրանսպորտային պատահարների փորձաքննության կենտրոն: Կենտրոնի հիմնական նպատակը կլինի հանրությանը տրամադրել մասնագիտական եզրակացություն տրանսպորտային բնագավառում տեղի ունեցած պատահարների (վթարների, միջադեպերի, և այլ նմանատիպ դեպքերի) մասին:

2009 թվական

ՀՀ տարածքում վտանգավոր բեռների փոխադրումները կարգավորող օրենսդրության համապատասխանեցման համար հիմք կհանդիսանա 1996թ. հուլիսի 23-ի Խորհրդի թիվ 96/49 դիրեկտիվը[40]:

Եվրոպական Միության օրենսդրական պահանջներին համապատասխան կմշակվի ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ ՀՀ տարածքով երկաթուղային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման կարգը հաստատելու մասին:

[40] 1996թ. հուլիսի 23-ի Խորհրդի թիվ 96/49 դիրեկտիվը անդամ պետությունների երկաթուղով վտանգավոր բեռների փոխադրման առնչվող օրենքների մոտարկման վերաբերյալ:

2.1.1 Օրենսդրական համապատասխանեցում և իրագործում

NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Ժատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
	1	2	3	4	5	6
			2007			
1.	• «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում • ՀՀ երկաթուղային ենթակառուցվածքի և այն օգտագործող ընկերությունների անվտանգության գնահատման կարգը հաստատելու մասին կառավարության որոշման նախագծի մշակում հիմնվելով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի N 116-052; 116-053; 116-056 և 67 հրամանների վրա • ՀՀ երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործման ու անվտանգության սերտիֆիկացման համար վճարների գանձման կարգը հաստատելու մասին կառավարության որոշման նախագծի մշակում, հիմնվելով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության երկաթուղային տեխնիկական շահագործման կանոնները հաստատելու մասին 15.03.2004թ N67-Ն հրամանի վրա	2001թ. փետրվարի 26-ի թիվ 2001/14 Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործման ու անվտանգության սերտիֆիկացման համար վճարների գանձման մասին 2004թ. ապրիլի 29-ի թիվ 2004/49 Խորհրդի և Խորհրդարանի դիրեկտիվ միության երկաթուղու անվտանգության վերաբերյալ. որը լրացնում է երկաթուղային կազմակերպությունների լիցենզավորման մասին 95/18 դիրեկտիվը և երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործման ու անվտանգության սերտիֆիկացման համար վճարների գանձման մասին 2001/14 դիրեկտիվը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մասնակցությամբ)	2-րդ եռամսյակ	189	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	• «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • ՀՀ տարածքում երկաթուղային գործունեություն իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման կարգը հաստատելու մասին կառավարության որոշման	1995թ. հունիսի 19-ի թիվ 95/18 խորհրդի դիրեկտիվ երկաթուղային կազմակերպությունների լիցենզավորման մասին	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, ՀՀ հանրային ծառայությունները	4-րդ եռամսյակ	60	

NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Ժամանակացույցի մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
	նախագծի մշակում		կարգավորող հանձնաժողովի մասնակցությամբ)			
2007, ԸՆԴԱՄԵՆԸ					249	
2008						
3.	• «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • ՀՀ տարածքում համակցված փոխադրումների ընդհանուր կանոնները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1992թ. դեկտեմբերի 7-ի թիվ 92/106 Խորհրդի դիրեկտիվ անդամ պետությունների միջև որոշ տեսակի համակցված փոխադրումների համար ընդհանուր կանոններ հաստատելու մասին	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2008, ԸՆԴԱՄԵՆԸ					30	
2009						
4.	• ՀՀ տարածքով երկաթուղային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման կանոնները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1996թ. հուլիսի 23-ի թիվ 96/49 խորհրդի դիրեկտիվ անդամ պետությունների երկաթուղով վտանգավոր բեռների փոխադրման առնչվող օրենքների մոտարկման վերաբերյալ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության, ՀՀ բնապահպանության նախարարության մասնակցությամբ)	2-րդ եռամսյակ	488	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2009, ԸՆԴԱՄԵՆԸ					488	
2006 – 2008, ԸՆԴԱՄԵՆԸ					767	

2.1.2 Ինստիտուցիոնալ կարողություններ

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Ծերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	-	Երկաթուղային տրանսպորտի բնագավառի անվտանգության գնահատման Եվրոպական համակարգի վերաբերյալ սեմինար դասընթաց (5 օր / 2007թ.) Երկաթուղային փոխադրումների և համակցված փոխադրումների կազմակերպման վերաբերյալ սեմինար դասընթաց (3 օր / 2008թ.)	
2.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ բնապահպանություն նախարարություն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	-	Վտանգավոր բեռների փոխադրման կազմակերպման և անվտանգության ապահովման վերաբերյալ դասընթացներ (10օր/ 2009թ.)	
3.		Տրանսպորտային պատահարների փորձաքննության կենտրոն, 2008թ. (2004թ. ապրիլի 29-ի թիվ 2004/49 Խորհրդի և Խորհրդարանի դիրեկտիվ միության երկաթուղու անվտանգության վերաբերյալ, որը լրացնում է երկաթուղային կազմակերպությունների լիցենզավորման մասին 95/18 դիրեկտիվը և երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործման ու անվտանգության սերտիֆիկացման համար վճարների գանձման մասին 2001/14 դիրեկտիվը: 1996թ. հուլիսի 23-ի թիվ 96/49 խորհրդի դիրեկտիվը անդամ պետությունների երկաթուղով վտանգավոր բեռների փոխադրման առնչվող օրենքների մոտարկման վերաբերյալ):		

3.1 Քաղաքացիական ավիացիա

Ներածություն

Քաղաքացիական ավիացիայի բնագավառում ԵՄ օրենսդրությունը հիմնականում նպատակաուղղված է թռիչքների անվտանգության և ավիացիոն անվտանգության ապահովման, օդային փոխադրումների և հարակից գործունեության իրականացման շուկայի ըստ ամենայնի ազատականացման, միասնական եվրոպական երկնքի և օդային երթևեկության կառավարման միասնական եվրոպական համակարգի հիմնման հարցերի կանոնակարգմանը: Այս խնդիրները լուծելու նպատակով, ԵՄ օրենսդրությամբ իրականացվում է ավիացիայի բնագավառում միասնական իրավական բազայի ստեղծումը, որի բաղկացուցիչները, ներառվելով անդամ երկրների ազգային օրենսդրություններում, ապահովում են դրանց համապատասխանությունը միմյանց: Դրան զուգահեռ, ԵՄ օրենսդրությամբ ապահովվում է նաև համապատասխան համատեղ մասնագիտական կառույցների ստեղխումը, որոնց գործունեությունը նպատակաուղղված է անդամ երկրների հետագա ինտեգրմանը: Ընդ որում, այդ մասնագիտական կառույցներից որոշներին կարող են միանալ միայն ԵՄ անդամ հանդիսացող երկրները, իսկ մյուսներին՝ նաև եվրոպական այլ երկրներ:

Հաշվի առնելով ասվածը, սույն ծրագրում առավել մանրամասնորեն քննարկվում են ԵՄ ակտերի այն դրույթները, որոնց համապատասխանությունը կարող է ապահովվել՝ այդ դրույթները ՀՀ օրենսդրությունում ներառնելու ճանապարհով: Մինչդեռ ԵՄ օրենսդրության այն դրույթները, որոնք նպատակաուղղված են համատեղ մասնագիտական կառույցների հիմնմանը, ինչպես նաև այն դրույթները, որոնք կարող են գործել միայն ԵՄ-ին անդամակցության դեպքում, կամ համապատասխան միջպետական համաձայնագրերի առկայության դեպքում, սույն ծրագրում չեն քննարկվում:

ՀՀ-ում ավիացիայի բնագավառի գործունեությունը կանոնակարգող օրենսդրությունը ներառնում է «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքը, որով իրականացվում է բնագավառի գործունեության ընդհանուր կանոնակարգումը, և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերը: Ինչպես նշված է համեմատական վերլուծության արդյունքներում, «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքը հիմնականում համապատասխանում է ԵՄ օրենսդրության պահանջներին, սակայն օրենքի հիման վրա ընդունվելիք նորմատիվ իրավական ակտերը շատ դեպքերում բացակայում են, իսկ ընդունված ակտերի մի մասը հակասում են ԵՄ օրենսդրության պահանջներին:

Առկա անհամապատասխանությունները վերացնելու նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները:

2006 թվական

Թռիչքային անձնակազմերի ատեստավորման վկայականների տրման կարգն ու պայմանները ԵՄ օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով կընդունվի «Թռիչքային անձնակազմերին ատեստավորման վկայականների տրման և օտարերկրյա վկայականների ճանաչման ու վավերացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը՝ հիմք ընդունելով 1991թ. դեկտեմբերի 16-ի Եվրոպական խորհրդի No 91/670/EEC[41] դիրեկտիվի, ԵՄ երկրներում կիրառվող՝ JAA-ի JAR FCL կանոնակարգի պահանջները և ԻԿԱՕ-ի ստանդարտները:

Օդանավերի թռիչքային պիտանիության ապահովման նպատակով կընդունվի «Օդանավերի Թռիչքային պիտանիության սերտիֆիկատների տրման, գործողության ժամկետի երկարաձգման և օտարերկրյա թռիչքային պիտանիության սերտիֆիկատների ճանաչման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը՝ հիմք ընդունելով Եվրոպական Խորհրդարանի և Եվրոպական Խորհրդի 2002թ. հուլիսի 15-ի «Քաղաքացիական ավիացիայի բնագավառում ընդհանուր կանոնների և Թռիչքային Անվտանգության Եվրոպական Գործակալության հիմնադրման մասին» No 1592/2002[42] կանոնակարգի դրույթները:

2007 թվական

Ավիացիոն պատահարների և միջադեպերի դեպքերում անհարկի պատասխանատվության և պատժամիջոցների կիրառումը բացառելու, պարտադիր զեկուցման ենթակա իրադարձությունների ցանկը սահմանելու, քննություններն անցկացնող՝ ՔԱԳՎ-ից անկախ առանձին պետական մարմնի հիմնման անհարժեշտությունը սահմանելու, քննությունների վերջնական հաշվետվության պարտադիր

---

[41] Քաղաքացիական ավիացիայի բնագավառում գործունեություն իրականացնելու նպատակով ատեստավորման վկայականների փոխադարձ ճանաչման մասին 1991թ. Եվրոպական խորհրդի N 91/670/EEC դիրեկտիվ,

[42] Քաղաքացիական ավիացիայի բնագավառում ընդհանուր կանոնների և թռիչքային անվտանգության Եվրոպական Գործակալության հիմնադրման մասին 2002թ. հուլիսի 15-ի Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի N 1592/2002 կանոնակարգ:

հրապարակման, քննության հաշվետվությունում անոնիմության սկզբունքի պահպանման, ինչպես նաև այլ առումներով զեկույցների ներկայացման և մասնագիտական քննությունների անցկացման ընթացակարգերի համապատասխանեցման նպատակով անհրաժեշտ կլինի իրականացնել ՀՀ Քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին և «Ավիացիայի մասին» օրենքում փոփոխություն անելու մասին օրենքի նախագծերի և «ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 1777- Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում:

Օդանավակայաններում վերգետնյա սպասարկումների շուկայի ազատականացման նպատակով կընդունվի «Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում օդային փոխադրումների վերգետնյա սպասարկման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում:

Չվերթերի հետաձգման կամ չեղյալ հայտարարելու դեպքերում ուղևորների շահերի պաշտպանության ապահովման նպատակով կմշակվի «Չվերթերի հետաձգման կամ չեղյալ հայտարարելու դեպքերում ուղևորների փոխհատուցման և օգնության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Կվերանայվեն ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի մասին» 02.10.2003թ. թիվ 1307-Ն որոշումը և «Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ավիացիոն անվտանգության հսկողության կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» 27.05.2004թ. թիվ 944-Ն որոշումը՝ ավիացիոն անվտանգության ապահովման հարցերում լիակատար համապատասխանություն ապահովելու նպատակով:

ԵՄ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ օդային փոխադրողներին գործունեության լիցենզաների տրման պահանջներ և ընթացակարգեր սահմանելու նպատակով, կիրականացվի «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ անելու մասին օրենքների նախագծերի մշակում, ինչպես նաև «Օդային փոխադրողների լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի և «ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 9-ի թիվ 21- Ն որոշմամբ հաստատված՝ «Չվացուցակի ենթակա և չվացուցակի չենթարկվող օդային տրանսպորտի գործունեության տեսակների լիցենզավորման կարգը չեղյալ հայտարարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում:

Քաղաքականության համապատասխանեցման նպատակով կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- Եվրոպական Միության հետ կստորագրվի օդային հաղորդակցությունների վերաբերյալ «հորիզոնական» համաձայնագիր, որը նպատակաուղղված կլինի օդային փոխադրումների շուկայի հետագա ազատականացմանը և Միության չափորոշիչներին համապատասխանեցմանը:
- Հայաստանի Հանրապետության կողմից կվավերացվի Մոնրեալի Կոնվենցիան:

2008 թվական

Օդանավերի նախագծման, արտադրության, շահագործման, տեխնիկական սպասարկման և այդ աշխատանքներն իրականացնող անձանց ու կազմակերպություններին ներկայացվող պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով կընդունվեն «Օդանավերի և աերոնավտիկական արտադրատեսակների տիպի սերտիֆիկատների տրման կանոնակարգը հաստատելու մասին» և «Օդանավերի վրա տեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների սերտիֆիկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումները:

Կընդունվի նաև «Օդանավակայաններում չվերթերին ժամանակային պատուհաններ հատկացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:

Ինստիտուցիոնալ կարողությունների ապահովման նպատակով կհիմնվի տրանսպորտի բնագավառում պատահարների ու միջադեպերի փորձաքննություն (մասնագիտական քննություն) անցկացնող անկախ կենտրոն:

3.1.1Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2006			
1.	«Թռիչքային անձնակազմերին ատեստավորման վկայականների տրման և օտարերկրյա վկայականների ճանաչման ու վավերացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Քաղաքացիական ավիացիայի բնագավառում գործունեություն իրականացնելու նպատակով ատեստավորման վկայականների փոխադարձ ճանաչման մասին 1991թ. դեկտեմբերի 16-ի Եվրոպական խորհրդի No 91/670/EEC դիրեկտիվ և ԵՄ երկրներում կիրառվող՝ JAA-ի JAR FCL կանոնակարգ	ՀՀ ՔԱԳՎ	4-րդ եռամսյակ	120	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	«Օդանավերի Թռիչքային պիտանիության սերտիֆիկատների տրման, գործողության ժամկետի երկարաձգման և օտարերկրյա թռիչքային պիտանիության սերտիֆիկատների ճանաչման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Քաղաքացիական ավիացիայի բնագավառում ընդհանուր կանոնների և Թռիչքային Անվտանգության Եվրոպական Գործակալության հիմնադրման մասին 2002թ. հուլիսի 15-ի Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի No 1592/2002 կանոնակարգ	ՀՀ ՔԱԳՎ	4-րդ եռամսյակ	50	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
		ԸՆԴԱՄԵՆԸ 2006			170	
			2007			
3.	• «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն անելու մասին» օրենքի նախագծի մշակում • ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 1777- Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն պատահարների և միջադեպերի քննության անցկացման, դասակարգման և հաշվառման կարգում	Քաղաքացիական ավիացիայի բնագավառում ավիացիոն պատահարների և միջադեպերի մասնագիտական քննության անցկացման հիմնարար սկզբունքները սահմանող 1994թ. նոյեմբերի 21-ի Եվրոպական խորհրդի No 94/56/EC դիրեկտիվ, ԻԿԱՕ-ի համապատասխան փաստաթղթեր	ՀՀ ՔԱԳՎ (ՀՀ ԿԱ ոստիկանություն)	1-ին եռամսյակ	40	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

	փոփոխություն անելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում					
4.	• «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն անելու մասին» օրենքի նախագծի մշակում • ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 1777-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն պատահարների և միջադեպերի քննության անցկացման, դասակարգման և հաշվառման կարգում փոփոխություն անելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Քաղաքացիական ավիացիայի բնագավառում ավիացիոն իրադարձությունների վերաբերյալ զեկույց ներկայացնելու մասին 2003թ. հունիսի 13-ի Եվրոպական խորհրդի No 2003/42/EC դիրեկտիվ	ՀՀ ՔԱԳՎ	1-ին եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
5.	«Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում օդային փոխադրումների վերգետնյա սպասարկման կարգը հաստատելու մասին » ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Միության օդանավակայաններում վերգետնյա սպասարկումների շուկա մուտք գործելու մասին 1996թ. հոկտեմբերի 15-ի Եվրոպական խորհրդի 96/67/EC դիրեկտիվը:	ՀՀ ՔԱԳՎ (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով)	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
6.	«Չվերթերի հետաձգման կամ չեղյալ հայտարարելու դեպքերում ուղևորներին փոխհատուցման և օգնության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում:	Չվերթերի հետաձգման կամ չեղյալ հայտարարելու դեպքերում ուղևորներին փոխհատուցման և օգնության ընդհանուր կանոնների մասին 2004թ. փետրվարի 11-ի Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի No 261/2004 կանոնակարգ	ՀՀ ՔԱԳՎ (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն)	2-րդ եռամսյակ	15	
7.	• «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 02.10.2003թ. թիվ 1307-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի	Քաղաքացիական ավիացիայի անվտանգության ընդհանուր կանոններ սահմանելու մասին 2002թ. դեկտեմբերի 16-ի Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի No 2320/2002 կանոնակարգ	ՀՀ ՔԱԳՎ (ՀՀ ԿԱ ոստիկանություն ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն)	3-րդ եռամսյակ	15	նախնական փորձաքննություն

	մշակում: «Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ավիացիոն անվտանգության հսկողության կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 27.05.2004թ. թիվ 944-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում					
8.	• «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ անելու մասին» օրենքի նախագծի մշակում • «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ անելու մասին» օրենքի նախագծի մշակում • «Օդային փոխադրողների լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում:	Օդային փոխադրողների լիցենզավորման մասին 1992թ. հուլիսի 23-ի Եվրոպական խորհրդի No 2407/92 կանոնակարգ	ՀՀ ՔԱԳՎ (ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն)	4-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն,
ԸՆԴԱՄԵՆԸ 2007					**115**	
2008						
9.	• «Օդանավերի և աերոնավտիկական արտադրատեսակների տիպի սերտիֆիկատների տրման կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում «Օդանավերի վրա տեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների սերտիֆիկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Քաղաքացիական ավիացիայի բնագավառում գործող տեխնիկական պահանջների և ադմինիստրատիվ ընթացակարգերի հարմոնիզացման մասին 1991թ. դեկտեմբերի 16-ի Եվրոպական խորհրդի No 3922/91 կանոնակարգ և դրանով ուժ ստացած JAA-ի հետևյալ փաստաթղթեր. JAR 1, JAR 22, JAR 25, JAR AWO, JAR P, JAR APU, JAR TSOT, JAR VLA, JAR 145.	ՀՀ ՔԱԳՎ	1-ին եռամսյակ	200	Անձնակազմի վերապատրաստում, Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն,
10.	«Օդանավակայաններում չվերթերին ժամանակային պատուհաններ հատկացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Միության օդանավակայաններում չվերթերին ժամանակային պատուհաններ հատկացնելու մասին 1993թ. հունվարի 18-ի Եվրոպական խորհրդի No 95/93 կանոնակարգ	ՀՀ ՔԱԳՎ	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն,

ԸՆԴԱՄԵՆԸ 2008	215	
ԸՆԴԱՄԵՆԸ	**500**	

3.1.2.Ինստիտուցիոնալ կարողություններ

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ ՔԱԳՎ	-	Օդանավերի թռիչքային պիտանիության, շահագործման և հարակից հարցերի վերաբերյալ դասընթաց(5 օր, 2006թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	ՀՀ ՔԱԳՎ	-	Թռիչքային անձնակազմերին ատեստավորման վկայականների տրման հարցերի վերաբերյալ դասընթաց (2 օր, 2006)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	ՀՀ Կառավարություն	(Քաղաքացիական ավիացիայի բնագավառում ավիացիոն պատահարների և միջադեպերի մասնագիտական քննության անցկացման հիմնարար սկզբունքները սահմանող 1994թ. նոյեմբերի 21-ի Եվրոպական խորհրդի No 94/56/EC դիրեկտիվ)		
4.	ՀՀ ՔԱԳՎ	-	Ավիացիոն իրադարձությունների վերաբերյալ զեկույցների ներկայացման և մասնագիտական քննությունների անցկացման վերաբերյալ դասընթաց (3 օր, 2007)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
5.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	Տրանսպորտային պատահարների կենտրոնի ստեղծում 2007թ.		

3.1.3. Քաղաքականության համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
2007						
1.	Եվրոպական Միության հետ օդային հաղորդակցությունների վերաբերյալ «հորիզոնական» համաձայնագրի ստորագրում	• Միության օդային փոխադրողների կողմից Միության ներքին օդային ուղիները շահագործելու մասին 1992թ. հուլիսի 23-ի Երախորհրդի No 2408/92 կանոնակարգ • Եվրոպական հարևանության քաղաքականություն, զեկույց Հայաստանի մասին(02.03.2005)	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	3-րդ եռամյակ	10	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	Մոնրեալի Կոնվենցիայի վավերացում Հայաստանի Հանրապետության կողմից	Միջազգային օդային փոխադրումներին վերաբերող որոշ կանոնների միասնականացման մասին Կոնվենցիային (Մոնրեալի Կոնվենցիա) Եվրոպական Միության միանալու վերաբերյալ 2001թ. ապրիլի 5-ի Եվրոպական խորհրդի 2001/539/EC որոշումը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	4-րդ եռամյակ	3	Նախնական փորձաքննություն